ԱՌԱՋՆԱԽԱՂ

ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻ ՓԱՅԼՈՒՆ «ՌԵՎԻԶՈՐԸ»՝ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ԲԵՄԻՆ. ԲՐԱՎՈ', ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐ

«Հայելում մեղադրելու պատճառ չկա, եթե դեմքը ծուռ է»: 19-րդ դարի ռուս դասական Նիկոլայ Գոգոլի (1809-1852) խոսքերն են «Ռեւիզոր» պիեսի նախաբանում: Կոռուպցիայի ու կեղծ բարեպաշտության մասին մշտանորոգ տրագիկոմեդիան այլեւս նորովի՝ Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի խաղացանկում է: Պրեմիերան (բեմադրությունը՝ Արմեն Բայանդուրյանի) կայացավ ապրիլի 11-ին, Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնում: Կայացավ ուղիղ ու մնացած բոլոր իմաստներով:

...Ռուսաստանի գավառական քաղաքներից մեկում «ահասարսուռ լուր» է տարածվում՝ մայրաքաղաք Պետերբուրգից ռեւիզոր է գալիս: Մեղքերի մեջ թաթախված քաղաքագլուխը *(Արթուր Գասպարյան)* եւ չինովնիկներն իրենց հանցավոր ու կաշառակեր գործերի բացահայտումից սարսափած ոչ էլ նկատում են, որ հենց այդ ընթացքում պատահականության սկզբունքով քաղաքում հայտնված ճարպիկ սրիկան՝ խաղամոլ ու գինեմոլ, կնամոլ ու արկածախնդիր մանր պաշտոնյա Խլեստակովը *(Աշոտ Սիմոնյան)*, բնավ Ռեւիզորը չէ: Իր հանդեպ աննախադեպ ու արտառոց բարեհաճությունը, շինծու հաճոյախոսությունների տեղատարափն ու քծնանքը, ճիշտ ժամանակին ու ճիշտ տեղում հայտնված խաբեբան՝ ի շահ իրեն է օգտագործում: Քաղաքագլխի «աղերսագին խնդրանքով» նա հաստատվում է սրա տանն ու անհավանական ստերը ներկայացնում ամենայն «ճշմարտությամբ ու անկեղծությամբ»: Տեղի չինովնիկները խոնարհաբար կատարում են նրա քմահաճույքները, հնազանդվում, կաշառում, ծնկի են գալիս: Կաշին փրկելու համար, քաղաքագլուխը նույնիսկ «աչքերն է փակում» իր կնոջ Աննայի *(Գլորիա Գեւորգյան)* դստեր՝ Մարիայի *(Լիկա Սարուխանովա)* եւ Խլեստակովի սիրային եռանկյունու առաջ: Երիտասարդը սիրահետում է երկու կանանց միաժամանակ, նետվում մեկ՝ սրա, մեկ՝ նրա գիրկը եւ, ի վերջո, «խնդրում» դստեր ձեռքը: Ու մինչ ընտանիքը «թեւածում է» մայրաքաղաքում ապրելու ու գեներալության մասին երեւակայական տեսիլքներում, պահի վայելքն ապրած ու «եսի բացահայտման հոտն առած» Խլեստակովը՝ փախչում է: Սակայն, մինչ այդ ընկերոջն իր հետ կատարվածի մասին նամակ է գրում, որը բախտի քմահաճույքով հայտնվում է տանտիրոջ՝ քաղաքագլխի ձեռքում: Նամակում Խլեստակովը ինքնագոհ պարծենում է, որ հաջողացրել է խաբել նրանց, ովքեր ողջ կյանքում անընդհատ խաբել են, թալանել՝ նրանց, ովքեր անդադար թալանել են... Քաղաքագլուխը, չինովնիկները ապշահար պապանձվում են անճարությունից, երբ հանկարծ ներս է մտնում իրական Ռեւիզորը *(Արամ Միքայելյան)*...

Ռուսթավելու դահլիճում անշլագ է: Հայ ու վրացի հանդիսատեսը ոտքի է կանգնում:

Ծափահարությունները չեն դադարում: Հանդիսատեսը վայելել է դերասանական փայլուն խաղ, բեմական գույն **(Աննա Սոփրոմաձե)**, երգ-երաժշտություն (հնչյունային ռեժիսորի դերը այս անգամ ստանձնել էր թատրոնի ռեժիսոր **Լեւոն Ուզունյանը**) ու պարեր (**Նինա Կերվալիշվիլի**): Հանդիսատեսը ծափահարում է գրեթե բոլոր ադամյանցիներին, որովհետեւ ներկայացման մեջ զբաղված է թատրոնի գրեթե ողջ դերասանական կազմը: Յուրաքանչյուրն իր դերին համապատասխան տեսքով, վայել կեցվածքով ու վարպետությամբ է պայմանավորել ներկայացման մեծ հաջողությունը, թեեւ դրական հերոսի եւ ոչ մեկը չի մարմնավորել, որովհետեւ պիեսում նմաններ չկան: Այստեղ բոլորը մեղավոր են բոլորի առաջ, մասնակից՝ վայրագությունների ու անկարգությունների մեջ: Բոլորը մեղքի իրենց չափաբաժինն ունեն անարդարության գոյության մեջ: Մեղավոր են ոչ միայն չինովնիկները, այլեւ կաշառողները: Խաբեբա ու կեղտոտ են ոչ միայն տղամարդիկ, այլեւ՝ տիկնայք:

1836 թվականին գրված «Ռեւիզորն» առ այսօր արդիական է ու, բեմադրվելով տարբեր ժամանակներում, տարբեր երկրներում ու հանրաճանաչ ռեժիսորների կողմից, շարունակում է վեր հանել մարդու կեղտոտ էությունը: Վիրահայոց թատրոնում «Ռեւիզորի» առաջին բեմելն անցած դարի 80-ականներին էր՝ այդ տարիների գլխավոր ռեժիսոր Ռոման Չալտիկյանի բեմադրությամբ: Ընդգրկված էին թատրոնի այդ տարիների առաջատար դերասաններ Սերիկ Շեկոյանը, Լեյլա Մկրտչյանը, Ժիրայր Կարապետյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, իսկ Խլեստակովի դերում Ֆելիքս Խաչատրյանն էր:

Դերակատարներից մեկը նաեւ **Արմեն Բայանդուրյանն** էր, ով այսօր՝ իբրեւ թատրոնի գեղարվեստական ղեկավար եւ ներկայացման բեմադրիչ, ժամանակակից ու նոր երանգներով է ներկայացնում «Ռեւիզորը», եւ համոզված ենք՝ նոր սերնդի հանդիսատեսին թատրոնի կախարդական աշխարհը սիրել տալիս: Այս բեմադրությամբ եւս նորից է տեսանելի դարձնում իրական կյանքի կեղծ բարեպաշտությունը, կաշառակերությունը, խարդախությունը, հասարակ մարդու հանդեպ անտարբերությունը, որոնք ցավոք, դար ու ժամանակ չեն ճանաչում: Հետաքրքիր են հատկապես ռեժիսորական լուծումները, որոնք ոչ այլ ինչ են, քան Ն.Գոգոլի մտքի շարունակությունը: Խոսքը ժամանակ առ ժամանակ բեմում երեւացող սպիտակազգեստ կանանց մասին է՝ իբրեւ մաքրության, ազնվության ու խղճի խորհրդանիշ:

Յուրաքանչյուր ներկայացում՝ կատակերգություն, թե ողբերգություն մաքրելու, դաստիարակելու հատկություն ունի, որ կատարսիս է կոչվում: *«Թատրոն հաճախելն անգործություն եւ ժամանակի վատնում կամ պարզապես զբաղմունք չէ,- ասում էր Գոգոլը,- թատրոնն ամբիոն է, որտեղից աշխարհին կարող ենք շատ բան ասել բարու եւ չարի մասին»:*

...Ուրեմն, նպատակն իրագործված է: Պրեմիերան՝ կայացած...

Բրավո', ադամյանցիներ...

ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Լուսանկարները՝ ՎԱԼԵՐԻ ՀՈՒՆԱՆՅԱՆՑԻ

ԿԱՐԾԻՔՆԵՐ՝ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ

«Ռեւիզորի» պրեմիերան անցավ լեփ-լի դահլիճում, առանց որեւէ ազատ աթոռի: Հանդիսատեսի շարքում էին հայ ու վրաց մտավորականության ներկայացուցիչներ, մշակույթի գործիչներ: Այստեղ էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռոբիկո Ստուրուան, Վրաստանի մշակույթի նախարարության թատրոնների վարչության պետ Զազա Սոփրոմաձեն, Թբիլիսիի թատերական համալսարանի պրոռեկտոր, թատերագետ, պրոֆեսոր Գիորգի Ցքիտիշվիլին, Հայաստանից ժամանած անվանի գեղանկարիչ Մայիս Մխիթարյանը, «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը...

Ներկայացման ավարտին **«Վրաստանը»** մի քանի հանդիսատեսի խնդրեց կիսվել տպավորություններով:

ՌՈԲԻԿՈ ՍՏՈՒՐՈՒԱ - Այն, ինչ ասել եմ Վրաստանի Առաջին Ալիքին, ասեմ նաեւ «Վրաստանին», որի խմբագիրն իմ լավ բարեկամն է, եւ որը թատրոնի հետ ձեռք-ձեռքի բռնած Վրաստանում հայ մշակույթն ու գիրն է պահպանում:

Իսկապես շատ եմ հավանել ներկայացումը, սա անսպասելի ու համարձակ որոշում էր իմ գործընկերոջ ու մտերիմ բարեկամի՝ Արմեն Բայանդուրյանի կողմից, քանի որ հեշտ չէ դասական ստեղծագործությունից շեղվել ու հեղինակային հանգուցալուծումներ տալ՝ բազմիցս բեմադրված դասական ստեղծագործության մեջ: Շնորհավորում եմ ադամյանցիներին եւ ուրախ եմ, որ իրենց խաղացանկում նման հրաշալի ներկայացում են ունենալու:

ՖԵԼԻՔՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ - Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական թատրոնի դերասան, Խլեստակովի դերակատար՝ 1980-ականներին բեմադրված «Ռեւիզոր»-ում - Ինչ խոսք, հին ու նոր «Ռեւիզոր»-ների միջեւ հսկայական տարբերություն կա, հետեւաբար նաեւ՝ Խլեստակովների: Մոտ 30-ից ավելի տարիներ առաջ եմ մարմնավորել այս կերպարը: Ժամանակին Ռոման Չալտիկյանի բեմադրությունը նույնպես մեծ հաջողություն ունեցավ: Մեր «Ռեւիզորը» ավելի ավանդական, դասական ոճի մեջ էր, որովհետեւ սիմվոլիկան, ռիթմը գրեթե բացակայում էին այդ տարիների խորհրդային թատրոնում: Չալտիկյանի «Ռեւիզորը» կարող էիր դիտել ու հասկանալ առանց ընթերցելու, Բայանդուրյանի «Ռեւիզորը» դրդում է ընթերցել պիեսը: Իրականում Գոգոլի «Ռեւիզորը» հինգ գործողությունից է բաղկացած, եւ, եթե չլինի ռեժիսորի հմուտ բեմադրում, այն միգուցե ձանձրալի թվա: Իսկ Բայանդուրյանին դա հաջողվեց: Աշոտ Սիմոնյանն էլ իր հերթին, կարծում եմ լավ ներկայացրեց բեմադրիչի պահանջը, Խլեստակովին:

ԱՐՍԵՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ - Մառնեուլիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի Շահումյանի եւ լեռնային գոտու գյուղերի մեծամասնական պատգամավոր - Ծափողջույնների ժամանակ հպարտություն ապրեցի ե՛ւ թատրոնի. ե՛ւ մեզ համար: Հաճելի էր նաեւ գտնվել ռուսթավելյան լեգենդար թատրոնում: Մեր դերասանները հրաշալի էին: Իսկ «Ռեւիզորն» իսկապես սթափեցնող էր, դիպուկ ու շատ արդիական: Յուրաքանչյուրը մեզանից, գալով պաշտոնի, պետք է երբեք չկորցնի խղճի ու պատասխանատվության զգացումը:

ՍՏԵԼԼԱ ՄԿՐՏՉՅԱՆ - ջուրբակահարուհի - Ներկայացումը հիացրեց ինձ դերասանների բնական, անկեղծ ու տաղանդավոր խաղով: Երաժշտական ձեւավորումն ու պարերի բեմադրությունը նույնպես արտակարգ ներդաշանակության մեջ էին տեսարանների հետ: Զգացվում էր նաեւ, որ հանդիսատեսը կարոտել է իր թատրոնը, դահլիճում ասեղ գցելու տեղ չկար: Գիտեք, արվեստի գործչի համար առհասարակ, հանդիսաստեսից եկող ջերմությունը մեծ նշանակություն ունի: Ես ցավում եմ, որ հայ հանդիսատեսը ներկա չի լինում, օրինակ, մեր՝ Թբիլիսիի պետական կամերային նվագախմբի համերգներին, որն առաջին բարոկկո նվագախումբն է Կովկասում եւ, որի միակ հայ ջուրբակահարուհին եմ: Ուրախ կլինեմ, որ նույն հանդիսատեսին, մեր թատրոնի հրաշալի դերասաններին տեսնել նաեւ մեր համերգներին:

ՎԱՆԻԿ ԱՐՈՍՅԱՆ - Քվեմո-Քարթլիի տարածաշրջանի Մառնեուլիի մունիցիպալիտետի Ծերեթելի (Միրզոեւկա) գյուղի հանրային դպրոցի տնօրեն - Շնորհակալ եմ Արմեն Բայանդուրյանին մեզ հիշելու ու նման պատվի արժանացնելու համար: Հարցը միայն արտակարգ ներկայացումը չէ, այլեւ առաջին բեմելի ուրախությունը հենց մեզ հետ կիսելու պարոն Բայանդուրյանի ցանկությունը եւ, մանավանդ Վրաստանի Մայր թատրոնում, ուր մեզանից ոչ ոք ցավոք չէր եղել: Եկել էինք գրեթե ողջ մանկավարժական կազմով, գյուղի բնակչության ներկայացուցիչներով: Համոզված ենք, դեռ երկար ենք գյուղում քննարկելու «Ռեւիզորը» եւ ուրախանալու նման տաղանդավոր դերասանների գոյությամբ:

ԻՐԻՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ - մանկավարժ - Հոյակապ էր դերասանների խաղը, բայց երաժշտությունն ու պարը, ըստ իս քիչ երկար էին, բեմից ավելի շատ խոսք պետք է հնչի: Ինձ հատկապես դուր եկավ Աշոտ Սիմոնյանը՝Խլեստակովի դերակատարը: Նա շատ ազատ ու համարձակ էր իր խոսքի, վարքի ու շարժուձեւի մեջ: Չտեսա Խլեստակովի ծառային, ով ըստ պիեսի առաջինն էր կռահել, որ տիրոջը շփոթել են մեկ ուրիշի հետ, մինչդեռ կարծում եմ նրա ներկայությունը պարտադիր էր ներկայացման մեջ:

Կուզեի նաեւ շնորհակալություն հայտնել մեր երիտասարդ դերասաններին, ովքեր, ի հեճուկս դժվարությունների, մնացել են թատրոնում ու այսօր կերտում են նրա ապագան:

COVID - 19

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ՀԱՂԹԱՀԱՐՎԵԼ Է

Ապրիլի 11-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին կառավարության հերթական նիստում հայտարարեց, որ Covid-ը գործնականում հաղթահարված է:

- Ցանկանում եմ ուրախացնել մեր քաղաքացիներին, կարելի է ասել, որ Covid-ը գործնականում գրեթե հաղթահարված է: Այսօր ունենք նման իրավիճակ: Ուզում եմ հիշեցնել թերահավատներին, ովքեր երկու ամիս առաջ քննադատում էին իմ խոսքերը: Այն բանից հետո, երբ «Omicron»-ը փոխարինեց այլ տեսակներին, մենք չեղարկեցինք Կանաչ անձնագրերը: Այս որոշմանը հետեւեց հայտնի մասնագետների քննադատությունը, թե ինչու է դա արվել եւ այլն: Այդուհանդերձ, պարզ դարձավ, որ ընդամենը երկու ամսում գործընթացը կառավարվեց նախարարի, կառավարության, խորհրդի կողմից, եւ վիճակը կայունացավ: Ապրիլի 11-ի դրությամբ, եղել է 107 դեպք, դա գործնականում նշանակում է, որ խնդիրը, ճգնաժամը հաղթահարված է: Ինչպես գիտեք, մի շարք սահմանափակումներ վերացվել են, այդ թվում՝ հանրային բացօթյա վայրերում դիմակ կրելը: Ուստի, մեր քաղաքացիներն այս ուղղությամբ ավելի մեծ ազատություն կունենան: Սթրեսն ու վախը անցյալում կմնան,- ասաց Իրակլի Ղարիբաշվիլին:

«ՊԱՔՍԼՈՎԻԴԸ» ԱՐԴԵՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ Է

Ինչպես նշեց Վրաստանի առողջապահության փոխնախարար Թամար Գաբունիան, Վրաստանում սկսվել է կիրառվել կորոնավիրուսային հիվանդության բուժման համար նախատեսված «Պաքսլովիդ» դեղամիջոցը, որով միայն մի քանի հիվանդ է բուժվում՝ հիվանդը սկզբում դեղորայքն ընդունում է բժշկի հսկողությամբ:

- Այս դեղորայքի օգտագործումը սկսվել է անցյալ շաբաթ: Հիվանդի վիճակի գնահատումից հետո, բժիշկը կորոշի, թե շարունակելո՞ւ է արդյոք բուժառուն դեղորայքի ընդունումը,- պարզաբանեց Թամար Գաբունիան:

Ավելի վաղ, փոխնախարարը հայտարարել էր, որ կորոնավիրուսը բուժող «Պաքսլովիդ» դեղամիջոցից հիվանդները կօգտվեն անվճար: Գաբունիան նշել էր նաեւ, որ այս դեղամիջոցը չի վաճառվի դեղատներում:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ 503 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում հասել է 503 075 801-ի: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 6 218 017-ը: Ապաքինվել է 453 481 510 մարդ:

Վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում **ԱՄՆ**-ն է, որտեղ հաստատվել է **82 252 965** դեպք: Այստեղ մահացածների թիվը **1 014 902** է, երկրորդ տեղում **Հնդկաստանն** է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **43 039 972**-ի, մահացածներինը՝ **521 772**-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան** է: Այստեղ վարակվել է **30 234 024**, մահացել՝ **661 855** մարդ: **Ֆրանսիայում** կորոնավիրուսով վարակվել է **27 447 397**, վարակի հետեւանքով մահացել՝ **143 910** մարդ: Ֆրանսիային հաջորդում են Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ռուսաստանը, Հ.Կորեան, Իտալիան ու Թուրքիան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **422 729-ի**, մահացածներինը՝ **8 621-ի**, ապաքինվածներինը՝ **410 420-ի**:

Ադրբեջանում վարակվածների թիվը **792 320** է: Վարակից մահացել է **9 705,** ապաքինվել՝ **782 440** մարդ:

Վրաստանում, ապրիլի 15-ի դրությամբ, ողջ համավարակի ընթացքում վարակվել է **1 652 707,** մահացել՝ **16 788,** ապաքինվել՝ **1 633 338** մարդ:

*Ապրիլի 15-ին, կորոնավիրուսով վարակման **235** նոր դեպքերից **121-ը Թբիլիսիում է, Աջարիայում՝ 9, Իմերեթիում՝ 16, Քվեմո Քարթլիում՝ 12, Շիդա Քարթլիում՝ 11, Գուրիայում՝ 15, Սամեգրելո-Զեմո Սվանեթիում՝ 21, Կախեթիում՝ 19, Մցխեթա-Մթիանեթիում՝ 4, Ռաճա-Լեչխումիում եւ Քվեմո Սվանեթիում՝ 4, Սամցխե-Ջավախեթիում՝ 3:***

Ապրիլի 15-ի տվյալներով մահացել է 5 մարդ:

Խորագիրը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ - 157

«...ԳԱԼԻՍ ԵՄ ԳԼՈՒԽ ԽՈՆԱՐՀԵԼՈՒ ՁԵՐ ԱՌԱՋ»

105 տարի առաջ, 1917 թվականի մարտի 31-ին Թիֆլիսի հինավուրց Խոջիվանքի գերեզմանոցում հողին էին հանձնում բանաստեղծ, թարգմանիչ Ալեքսանդր Ծատուրյանին, որի 52-րդ տարեդարձը 3 օր առաջ նշել էին նրա մերձավորները:

Հուղարկավորությունը կազմակերպել եւ թաղման հանձնաժողով էր ստեղծել «Մշակ» թերթի խմբագրությունը, որտեղ 11 տարի աշխատել էր բանաստեղծը: Հանձնաժողովի կազմում ընդգրկվել էր նաեւ Հովհաննես Թումանյանը: Թաղմանը ներկա լրագրողները, հասարակական գործիչներն ու համքարներն իրենց դրոշներով, սգո հսկայական թափորով բանաստեղծի դին նրա բնակարանից՝ Քռի ձախ ափին, Վորոնցովի կամրջից ոչ հեռու գտնվող Ռեուտովսկայա փողոցի 25 համարից (ներկայիս՝ Գ.Մազնիաշվիլի) ուղեկցում էին Վանքի փողոցում *(ներկայիս՝ Գ.Աքոնելի փողոցի N5, որտեղ գտնվում են մայրաքաղաքի թիվ 104 հայկական հանրային դպրոցն ու «Վրաստան» թերթի խմբագրությունը)* գտնվող առաջնորդանիստ Վանք եռագմբեթ եկեղեցի, որտեղ պիտի կատարվեր եկեղեցու կարգ: Իսկ քաղաքի հայկական բոլոր դպրոցների ու գիմնազիաների հայ աշակերտներն իրենց նվագախմբերով երկու շարք էին կազմել «Ալեքսանդրովսկու բաղից» մինչեւ Վանք եկեղեցի: Այդ ճանապարհին երկու-երեք ճառախոսություն կատարվեց, իսկ Խոջիվանքի գերեզմանատանը խոսվեց մի քանի դամբանական:

Ալեքսանդր Ծատուրյանը 19-րդ դարի հայ գրականության նոր պոեզիայի կերտողներից է: Ծնվել է 1865 թվականին, Զաքաթալա քաղաքում: Նրա կյանքի մեծ մասն անցել է Թիֆլիսում: Իր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար բանաստեղծը ստիպված է եղել կատարել տարբեր աշխատանքներ: Հենց նյութական ծանր վիճակն էլ նրան թույլ չի տվել բարձրագույն կրթություն ստանալ: Ծատուրյանի բնածին տաղանդը զարգացել է ջանադիր ինքնակրթության շնորհիվ: Նա գրական ասպարեզ է մտել 1886 թվականին «Որբի զատիկը» բանաստեղծությամբ, որը տպագրվել է «Աղբյուր» ամսագրում: Բանաստեղծական առաջին ժողովածուն լույս է տեսել 1891-ին, իսկ երկրորդը՝ 1898 թվականին: Ծատուրյանի ստեղծագործություններն աչքի են ընկնում հումանիզմով ու ազատասիրական ձգտումներով:

Հետաքրքիր է 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի ռուս ականավոր բանաստեղծ Վալերի Բրյուսովի՝ Ծատուրյանի գրական գործունեությանը տրված գնահատականը. «Իր ազդեցությամբ ժամանակակիցների վրա եւ իր բացարձակ նշանակությամբ, Ծատուրյանի պոեզիան հետ չի մնում Հովհաննես Թումանյանից ու Ավետիք Իսահակյանից»:

Հիշենք նաեւ, որ 1910 թվականին նշվել է Ալ.Ծատուրյանի գրական գործունեության 25-ամյակը: Այդ առիթով պոետին ուղղված նամակում Մեծն Ավետիք Իսահակյանը գրում է. «*...Եվ այսօր ես՝ Ձեր կրտսեր եղբայրը, գալիս եմ գլուխ խոնարհելու Ձեր առաջ, եւ ոչ միայն նրա առաջ, ինչ որ Դուք արել եք եւ ստեղծել, այլ այն մեծության առաջ, որ չարտահայտվեց ու չասվեց, որը կար Ձեր հոգում, եւ որը խեղդվեց մեր անհրապույր միջավայրում*»:

Ալեքսանդր Ծատուրյանի տապանաքարը Խոջիվանքի պանթեոնում

ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՑԵՐԵԿՈՒՅԹ

ԽՈՆԱՐՀՈՒՄՈՎ ԵՎ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ՝ ՄԱՅՐԵՐԻՆ

Համավարակով պայմանավորված, շուրջ 2 տարվա դադարից հետո, մայրաքաղաքի թիվ 103 դպրոցում կրկին մարդաշատ միջոցառում էր:

Ապրիլի 14-ին գարնանաբույր տրամադրությունն էր թեւածում կրթօջախի դահլիճում: «Օրհնյա՛լ լինեն բոլոր մայրերը» խորագիրն էր կրում հայկական բաժանմունքի ուժերով կազմակերպված միջոցառումը: Գեղեցիկ զարդարված բեմահարթակից ներկաներին «Մայրության եւ գեղեցկության տոնի» առիթով շնորհավորական ողջույնով դիմեցին բարձր դասարանների աշակերտները: Այնուհետեւ ցերեկույթին ներգրավված միջին եւ ցածր դասարանների սաները ներկայացրին Սուրբ Մարիամ Աստվածածնի ավետման տեսարանը: Իրար հաջորդող մասնակիցների շուրթերից հնչեցին բանաստեղծական գոհարներ՝ նվիրված մորը, մայրական քնքշանքին ու սիրուն:

Գրական-գեղարվեստական ցերեկույթը մի առանձնահատուկ մեծարանքի ու երախտագիտության խոստովանություն էր մեր Սուրբ մայրերին: Ինչպես ասմունքի ու տպավորիչ խոսքերի, այնպես էլ՝ հեզաճկուն պարային կատարումների (պարուսույց՝ Անգելինա Նազարյան-Քոչյան) ուրախ եւ աշխույժ հույզերը փոխանցվեցին դահլիճում գտնվող մայրերին, տատիկներին, ուսուցիչներին: Թե' աշակերտները, թե' դպրոցի հայոց լեզվի ու գրականության շնորհաշատ եւ վաստակաշատ ուսուցչուհի Գայանե Մխիթարյանը սեր ու ջերմություն չէին խնայել գերազանց միջոցառում կազմակերպելու համար:

Շնորհավորանքի խոսքերով հանդես եկան դպրոցի տնօրեն Արչիլ Չխաիձեն, ուսմասվար Հասմիկ Պապիկյանը, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության աշխատակցուհի Կարինե Մանուկյանը, որոնք կարեւորեցին մոր, կնոջ դերը ընտանիքում, հասարակության մեջ:

ՄԱՆՈՒԿ ԿԱՐԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ - 90. ԱԶԳԱՆՎԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

Խորհրդային Հայաստանի քաղաքական-պետական գործիչների ընդհանուր շղթայի մեջ Կարեն Սերոբի Դեմիրճյանը եղավ վերջինը՝ իր ուրույն ձեռագրով, ինքնատիպ գործելակերպով, սեփական ազգային դիմագծով, անցած փառահեղ ուղիով եւ, որ շատ ցավալի է, ողբերգական վախճանով: Վերջին տարիները եկան մի անգամ եւս հաստատելու այն ճշմարտությունը, որ վառ անհատականությունների գործունեության գնահատականներում ժողովուրդը չի սխալվում՝ Կարեն Դեմիրճյանի անձի նկատմամբ համաժողովրդական սիրո եւ երախտագիտության զգացումները մնացել են անխախտ:

Կարեն Դեմիրճյանն անցել է խորհրդահայ կուսակցական-պետական գործչի լիարժեք դպրոց: Ավարտելով Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկայի ֆակուլտետը՝ ուսումը շարունակել է ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր բարձրագույն կուսակցական դպրոցում: Աշխատել է ըստ մասնագիտության Երեւանի էլեկտրատեխնիկական գործարանում՝ անցնելով շարքային տեխնոլոգից մինչեւ գործարանի տնօրենի բոլոր փուլերը: 1966թ. Կ.Դեմիրճյանը կուսակցական աշխատանքի մեջ է՝ զբաղեցրել է Երեւանի քաղաքային կոմիտեի, իսկ 1972-ին՝ նրան վստահեցին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը:

Խորհրդային Հայաստանի քաղաքական-կուսակցական, ապա նաեւ տնտեսական կյանքում առաջին դեմքի կարգավիճակը Կարեն Սերոբիչին հնարավորություն տվեց արդեն 1975թ. գարնանից ձեռնամուխ լինելու հանրապետության առջեւ դրված բազմապիսի խնդիրների լուծմանը: Դրանցից առաջնայինը դեռ 20-ական թվականների վերջից Հայաստանի արդյունաբերության մեջ արմատավորված «փոքր հանրապետություն-մեծ քիմիա» աղետաբեր կարգախոսից հրաժարումն էր, գրեթե պատրաստ Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատը վերապրոֆիլավորումը մեքենաշինականի:

Գյուղատնտեսության ոլորտում կառուցվեցին խոշոր անասնապահական, ձկնաբուծական տնտեսություններ, տասնյակ թռչնանոցներ: Կարեն Դեմիրճյանը հատուկ ուշադրություն հատկացրեց հանրապետությունում շինարարական ծավալների ավելացման վրա: Ավարտվեցին Արփա-Սեւանի ջրատարի, Մետրոպոլիտենի, Մարզահամերգային համալիրի, Կարեն Սերոբիչի կողմից անվանակոչված եւ իրականացված «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի եւ բազմաթիվ այլ խոշոր կառույցների, բնակելի թաղամասերի ու տների շինարարական աշխատանքները, որոնք Հայաստանի ղեկի մոտ կանգնած գործչին բերեցին միանգամայն վաստակած «Կարեն Շինարար» պատվանունը:

Երջանկահիշատակ Կ.Դեմիրճյանի գործունեության մեջ ուրույն տեղն ուներ հայ մշակույթի, գիտության ու կրթության նկատմամբ հոգատար վերաբերմունքը: Հայարվեստի ու գրականության նկատմամբ Դեմիրճյանի ընդգծված վերաբերմունքն արտահայտվեց նաեւ հայոց մեծերի՝ Արամ Խաչատրյանի, Հովհաննես Շիրազի, Սիլվա Կապուտիկյանի, Առնո Բաբաջանյանի, էդվարդ Միրզոյանի, մարշալ Հովհհաննես Բաղրամյանի եւ այլոց հետ նրա հաստատած ջերմ ու անկեղծ բարեկամության մեջ:

Ծագումով էրգրից՝ Արեւմտյան Հայաստանից պապերի հոգու թելադրանքով Կարեն Դեմիրճյանը, դարձյալ հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ, նոր քայլեր կատարեց Յ. Զարոբյանի սկսած ձեռնարկումների ուղղությամբ: Արդեն 1975թ. ապրիլի 24-ին նորընտիր առաջին քարտուղարը մտցրեց հեռուստաելույթով ժողովրդին դիմելու եւ «լռության րոպեով» Մեծ եղեռնի անմեղ նահատակների հիշատակը հարգելու ավանդույթը:

Անսալով իր ժողովրդի լայն շերտերի ձայնին, գիտակցելով նոր պայմաններում իր գործունեության օգտակարությունը՝ Կարեն Դեմիրճյանը վերադարձավ մեծ քաղաքականություն՝: Ավա՜ղ, 1999-ի հոկտեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանի, վարչապետ Վազգեն Սարգսյանի եւ պետական մյուս գործիչների չարանենգ սպանությունը լրջորեն խաթարեց մեր երկրի զարգացման բնականոն ուղին, ի չիք դարձրեց բազմաթիվ ազգային ծրագրեր եւ իր ծանր կնիքը թողեց մեր հասարակական գիտակցության վրա:

Այսօր՝ Կարեն Սերոբի Դեմիրճյանի ծննդյան 90-րդ տարեդարձի օրը, կարող ենք իբրեւ մխիթարություն արձանագրել, որ նրա անմար հիշատակը միշտ վառ է մնալու մեր երախտապարտ ժողովրդի սրտում: Ժամանակն արդեն տվել է Դեմիրճյանական էպոխայի գնահատականը, իսկ նրա գլխավոր դերակատարի անունը, ինչպես ճիշտ նկատել են ժամանակակիցները, պատմությունը ներառել է վառ անհատականությունների կյանքի տարեգրության հավերժական շղթայի մեջ:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ ՏԱՐԲՆԹԵՑՈՒՄՆԵՐ ՉԿԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նաեւ արտաքին քաղաքականության ոլորտում տարբեր վեկտորներ ունենալու հանգամանքը, ինտեգրացիոն տարբեր համակարգեր ընտրելու հանգամանքը որոշակի ազդեցություն են ունենում: Բայց պետք է գոհունակություն հայտնել, որ փաստացի այդ ազդեցությունը մեր հարաբերությունների վրա հասցված է նվազագույնի,- ասաց Հայաստանի վարչապետն ու հավելեց, որ պետք է աշխատել այնպես, որ նույնիսկ այդ նվազագույն ազդեցությունը չնկատվի երկու երկրների տնտեսական հարաբերություններում, մանավանդ որ, գործում է ազատ առեւտրի համաձայնագիր:

- Կան նաեւ տարանցման հետ կապված հարցեր, որոնք պարզապես անհաղթահարելի են: Երբ եղանակային պայմանների պատճառով Վերին Լարսը փակվում է, ո՛չ Վրաստանի, ո՛չ Հայաստանի կառավարությունը ինչ-որ իրավիճակներում ոչինչ անել չի կարողանում: Հիմա մենք լաստանավի գործարկման որոշում ենք կայացրել, եւ դեռ պետք է տեսնենք՝ կաշխատի՞, թե՞ ոչ,- ասաց Նիկոլ Փաշինյանը՝ պատասխանելով Շիրակ Թորոսյանի հայ-վրացական հարաբերությունների վերաբերյալ հարցին:

Ըստ վարչապետի, Վրաստանի հետ միջպետական հարաբերությունների խնդիրը տնտեսական, քաղաքական, մշակութային եւ բոլոր ոլորտներում համագործակցությունը մաքսիմալ արդյունավետ դարձնելն է: Վրաստանի հայրենակիցների գործոնը շատ էական է այս հարաբերություններում:

- Եվ մենք հետեւողական ենք այդ հարցերում: Ուրախ ենք, որ Վրաստանի կառավարությունը եւ մեր կառավարությունը այս հարցերում տարընթերցումներ չունեն,- ասաց Նիկոլ Փաշինյանը՝ պատասխանելով Շիրակ Թորոսյանի հայ-վրացական հարաբերությունների վերաբերյալ հարցին:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ՆՇՎԵՑ «ՎՐԱՑ ԼԵԶՎԻ ՕՐԸ»

Ապրիլի 14-ին Երեւանի Վալերի Բրյուսով անվան պետական համալսարանի նիստերի փոքր դահլիճում, բուհի ուսանողների մասնակցությամբ եւ վրացերենի դասախոս Ջեննի Թամարյանի նախաձեռնությամբ, անցկացվեց «Վրաց լեզվի օրվան» նվիրված միջոցառումը:

Միջոցառմանը ներկա էին ԲՊՀ-ի ուսումնագիտական աշխատանքների հարցերով պրոռեկտոր Բելլա Մարգարյանը, ԲՊՀ դեկանները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ եւ ուսանողներ:

Ուսանողները վրաց հեղինակների բանաստեղծություններ արտասանեցին, կարդացին հետաքրքիր տեղեկություններ վրացական ավանդույթների, գինու եւ կենացների վերաբերյալ: Իսկ միջոցառման վերջում նաեւ պարեցին վրացական գեղեցիկ պար՝ հիացնելով բոլոր ներկաներին:

ՆԿԱՐՉԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆ՝ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայաստանում կանցկացվի համահայկական մանկապատանեկան նկարչական ամենամյա մրցույթ-փառատոն՝ «Ինքնաճանաչում. Էրեբունի» խորագրով:

Այն կանցկացվի Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության եւ Հենրիկ Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոն՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոցթանգարանի հետ համատեղ:

«Վերջին մի քանի տարիները մարտահրավերներով լի են ինչպես ողջ աշխարհի, այնպես էլ՝ հատկապես Հայաստանի Հանրապետության համար: Այս հարափոփոխ եւ անկայուն իրականության պայմաններում առավել քան երբեւէ, կարեւոր ենք համարում հայոց պատմությանն ու մեր արմատներին առավել խորությամբ անդրադառնալու հրամայականին ականջալուր լինելը»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Մրցույթ-փառատոնին կարող են մասնակցել 6-18 տարեկան արվեստասեր եւ ստեղծագործական շնորհք ունեցող հայ մանուկներ եւ պատանիներ ամբողջ աշխարհից՝ Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի բոլոր տեսակի կրթօջախների սաները, ինչպես նաեւ պարզապես ստեղծագործող, որեւէ մասնագիտական հաստատություն չհաճախող երեխաները:

ՁԱՏԿԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի կրթության նախարարության աջակցությամբ, ապրիլի 17-ին Երեւանի Սուրբ Աննա եւ Սուրբ Կաթողիկե եկեղեցիների բայօթյա տարածքում, առաջին անգամ կանցկացվի «Ձատկական փառատոն»: Փառատոնի ընթացքում կներկայացվեն «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոնի» եւ մասնագիտացված այլ կազմակերպությունների սաների ֆեռքի աշխատանքները, երեխաները հանդես կգան երաժշտական կատարումներով: Համերգային ծրագրում կընդգրկվեն նաեւ ճանաչված երաժիշտներ: Փառատոնին աջակցում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, «Ֆորմիակ Արտ» ընկերությունը եւ «ՀԵՀԵՄ» գրասենյակը:

ՌՈՒՍԱԿԱՆ ՌՈՒԲԼԻՆԵՐ՝ ԳԱԶԻ ԴԻՄԱՑ

Հայաստանը ռուսական գազի դիմաց սկսել է վճարել ռուբլով: Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի տեղեկությունների համաձայն, վերջին մի քանի վճարումները եղել են հենց ռուբլիներով, բայց համապատասխան փոխարժեքով: Նրա խոսքով, գնագոյացումը կատարվում է դոլարով, սակայն վճարումն իրականացվում է ռուբլիներով: «Գազպրոմի» պաշտոնական ներկայացուցիչ Սերգեյ Կուպրիյանովը եւս հաստատել է տեղեկությունը:

116,4 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Ապրիլի 12-ին Հայաստանի Ազգային ժողովում էկոնոմիկայի փոխնախարար Ռաֆայել Գեւորգյանը ներկայացրեց «Հայաստանի եւ Գերմանիայի կառավարությունների միջեւ 2020 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին նախագիծը, ըստ որի, Հայաստանին կտրամադրվի 116 միլիոն 400 հազար եվրոյի ֆինանսական օժանդակություն: Համաձայնագրով նախատեսվում է նաեւ 3,4 մլն եվրոյի ֆինանսական օժանդակություն տրամադրել Հայաստանին կենսաբազմազանության ու կայուն զարգացման ծրագրերի իրականացման, եւս 3,4 մլն եվրոյի ֆինանսական օժանդակություն՝ նշված ծրագրի իրականացման ու տեխնիկական աջակցմանն ուղղված անհրաժեշտ ուղեկցող միջոցառումների համար:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Ա Պ Ր Ի Լ

17.04.2022 Սուրբ Հարության տոն

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը կոչվում է նաեւ Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից եւ վերադարձ առ Աստված: Զատիկը թե՛ Հին, եւ թե՛ Նոր Կտակարաններում համարվում է 5 տաղավար տոներից մեկը:

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության՝ Սուրբ Զատկից սկսած հիսուն օրերը մինչեւ Հոգեգալուստ (Պենտեկոստե) Հայ Առաքելական եկեղեցում կոչվում են Հինունք կամ Հինանց շրջան՝ նվիրված Տիրոջ Հարության եւ Համբարձման խորհրդին: Այդ պատճառով ամբողջ շրջանը կոչվում է Տերունի:

Հինանց շրջանի վերջին տասն օրերը նվիրված են Քրիստոսի Համբարձմանը: Հինանց շրջանն ավարտվում է Հոգեգալստյան տոնով (այս տարի՝ մայիսի 11-ին): Համաձայն եկեղեցու կանոնների, բոլոր հիսուն օրերն ուտիք են, այսինքն՝ այս շրջանում չկան պահոց օրեր եւ թույլատրելի են բոլոր կերակրատեսակները:

23.04.2022 Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակության օր

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՍԿՍՎՈՒՄ Է ՄԵՏԵԽԻԻ ԿԱՄՐՋԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի հայտարարությամբ, քաղաքապետարանը սկսում է Մետեխիի կամրջի ամբողջական վերականգնումը:

Նրա խոսքով, աշխատանքների ընթացքում մասամբ կսահմանափակվի Մետեխիի կամրջի եւ հարակից տարածքի երթեւեկությունը:

- Սա մեր նախընտրական խոստումն էր: Նախագծի շրջանակներում, ճանապարհը կասֆալտապատվի, կվերանորոգվեն մայթերն ու կծածկվեն բնական քարե սալիկներով:

Նախատեսվում է նաեւ ամրացնել եւ մշակել ճակատամասերն ու կամարները: Բացի այդ, կթարմացվեն կամրջի չուգունե ճաղավանդակները, առանց արտաքին տեսքի փոփոխման: Աշխատանքները կսկսվեն մոտ տասն օրից: Նախօրոք տեղեկատվություն կտրամադրենք ճանապարհի փակման մասին,- նշեց Կախա Կալաձեն եւ հավելեց, որ ծրագրի արժեքը մոտ երկու միլիոն լարի է:

ԵՂԱՆԱԿ

ԱՊՐԻԼՅԱՆ ԱՆՈՄԱԼ ԵՂԱՆԱԿ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

2022 թվականի գարունը, ամենայն հավանականությամբ, առանձնակի տեղ կզբաղեցնի օդերեւութաբանության մատենագրության մեջ, որովհետեւ անոմալիան գրանցվեց դեռ մարտին Վրաստանի ողջ տարածքում պահպանվող սառնամանիքների ու ձնատեղումների տեսքով:

Ապրիլ ամսվա առաջին տասնօրյակի վերջին ձյունը տեղաց Ախալքալաքիում եւ Նինոծմինդայում: Միջազգային նշանակության Մցխեթա-Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհի Գուդաուրի-Կոբի հատվածը փակվեց բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար, որի պատճառը եղանակային վատ պայմաններն ու ձնահոսքերն էին:

Ուժգին քամիները լուրջ վնաս հասցրին Թբիլիսիին, Բաթումիին, Գորիին:

Թբիլիսիի Վարկեթիլիի թաղամասում ուժեղ քամին տապալեց ծառ, որի տակ հայտնվեցին երկու կին: Ծանր վնասվածքներով 40-ամյա կանանց տեղափոխեցին հիվանդանոց, չնայած նրանցից մեկին փրկել չհաջողվեց:

Գորիում, ուժեղ քամու հարվածից պոկված տանիքը մարմնական վնաս հասցրեց մի կնոջ, որին հիվանդանոցում ցուցաբերվեց բժշկական օգնություն:

Ուժեղ քամիները խնդիրներ են առաջացրել նաեւ Բաթումիում. վնասվել մի քանի շենքերի տանիքներ, մեքենաներ, արմատախիլ են եղել ծառեր:

Շրջակա միջավայրի ազգային գործակալության հաղորդմամբ, սպասվում է օդի ջերմաստիճանի զգալի նվազում այժմ արդեն ապրիլին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊՐԻԼԻ 25-Ից ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍԸ ԿԴԱՌՆԱ ԵՐԿՓՈՒԼ

Վրաստանի ներքին գործերի նախարարության սպասարկման գործակալության տեղեկատվությամբ, ապրիլի 25-ից «B» եւ «BE» կարգի տրանսպորտային միջոցների կառավարման իրավունքի քննության գործնական մասը կդառնա երկփուլ:

Վարորդական իրավունք ստանալ ցանկացողները նոր չափանիշով գործնական թեստը կկարողանան անցնել Ռուսթավիի, Գորիի, Թելավիի, Փոթիի, Ախալցիխեի, Քութայիսիի, Սաչխերեի, Օզուրգեթիի եւ Բաթումիի ծառայություններում:

Փոփոխությունների համաձայն, փակ տարածքում հատուկ մանեւրը հաջողությամբ ավարտելուց հետո, վարորդի թեկնածուն կանցնի երկրորդ փուլ՝ իրական երթեւեկության պայմաններ: Յուրաքանչյուր քննական ծառայության համար մշակվել են մի քանի երթուղիներ, որոնք կհաստատվեն Վրաստանի ներքին գործերի նախարարի համապատասխան հրամանով:

Գործնական քննության երկրորդ փուլի համար հերթագրվելը պարտադիր է, որը հնարավոր է՝ ուղղակի դիմելով գործակալության համապատասխան կառուցվածքային ստորաբաժին, վեբ կայքի կամ բջջային հավելվածի միջոցով:

«Վարորդ դառնալու թեկնածուն իրավունք ունի առաջին փուլը հաջողությամբ անցնելուց հետո, 365 օրացուցային օրվա ընթացքում անցնել գործնական քննության երկրորդ փուլը: Անբավարար արդյունքի դեպքում, հաջորդ քննությունը հնարավոր կլինի հանձնել՝ հերթագրվելով ոչ շուտ, քան 30 օրում»,- ասվում է տեղեկատվության մեջ:

Վրաստանի ՆԳ նախարարության սպասարկման գործակալության տվյալներով, 365-օրյա ժամկետը լրանալու դեպքում տեսական եւ գործնական քննության առաջին փուլում ստացված բավարար արդյունքը կորցնում է իր օրինական ուժը:

Խ Ա Չ Բ Ա Ռ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Թերակղզային պետություն: 4.Արամեի երգացանկից՝ «... տարի»: 9.Հյուսնի գործիք: 10.Կավագործ: 11.Ակսել Բակունցի գրական հերոս: 13.Հայկական ֆիլմ՝ «... ծովուն արշալույսը»: 14.Եռացող, արագ ընթացող գործ: 17.Հայ գուսան: 18.Վրացական սպորտային թերթ: 19.Ամերիկյան նահանգ: 22.Շատ ձգված, լարված: 23.«Հարսնացու հյուսիսից» ֆիլմի հերոս: 27.Թատրոնի մաս: 31.Որսի կենդանի: 32.Վայրենի, անողորմ, կատաղի: 34.Աշխարհահռչակ աստղադիտարան Հայաստանում: 35.Հարավսլավական ազգ: 37.... եւ ահյակ: 39.Խոտակեր կենդանու մարմնի մաս: 40.Կայենի զոհը: 42.Վրաց գրող, հասարակական գործիչ ... Ծերեթելի: 44.Եմենի մայրաքաղաքը: 45...., նույն, միեւնույն: 46.Հարցական դերանուն: 48.Գանայի սիրտը: 49.Հատիկավոր բույս: 51.Գեներալի ուսերին:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Գրական հերոս Շիրվանզադեի «Պատվի համարում»: 2.Քաղաք եւ մունիցիպալիտետ Վրաստանում: 3.Սիբիրյան գետ: 5.Ուսուցչապետ, դպիր: 6.Պետություն Հարավային Ամերիկայում: 7.Վ.Տերյանի ծննդավայր գյուղը: 8.Վրաց թագավոր: 11.Երաժշտական հարվածային գործիք: 12.Երկնքի կապույտը: 15.Երաժշտության տեսակ: 16.Հանրահայտ երգիչ ... Մնացականյան: 20.Միջինասիական ազգ: 21.«Արտավազդ» թատերական մրցանակաբաշխության հաղթող, Հայաստանի վաստակավոր արտիստ, Ավետ Ավետիսյանի մրցանակի դափնեկիր ... Մարության: 24.Վառ կարմիրը: 25.Հին Վրաստանում ժողովրդական խավ, իշխան: 26.Լուսաբաց, այգ: 28.Ձիերի խումբը: 29.Թբիլիսահայ գրող Վալերի Հունանյանցի Կոմիտասին նվիրված վեպը՝ «Ժիվ բուժարանի ...»: 30.Հայերենի հոլով: 33.«Արգո» նավի նավապետը: 36.Միակ, անկրկնելի: 38.Կարծախում ծնված հայ աշուղ: 39.Բեմարվեստի տեսակ: 41.Նար-Դոսի վիպակներից «... եւ նա»: 43.Թագավոր, երկրի ղեկավար: 44.Հանրահայտ երգչուհի Լուսինե Զաքարյանի երգացանկից «..., ...»: 47.Բանջարանցի փոքր գետը: 49.Յոթերորդ ձայնանիշը: 50.Անորոշ դերանուն:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Տոլմա: 8.Ամենա: 10.Արամ: 11.Տան: 13.Բադրի: 14.Մարտունի: 16.Մալի: 17.Հոր: 18.Տավիղ: 20.Դաթա: 21.Լոկ: 22.Շտապ: 26.Ալավ: 28.Բագին: 31.Լիր: 32.Կոպ: 34.Կանն: 35.Մարգո: 36.Ձայն: 38.Դիք: 41.Հաստ: 43.Սրբուհի: 45.Օղակ: 48.Քիթ: 49.Թարմ: 52.Եմիշ: 53.Կառ: 54.Լուս: 55.Ակին: 56.Թոք: 57.Խաշու: 58.Դող: 59.Վան: 60.Նոր:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Մոռանալ: 2.Լարի: 3.Գամմա: 4.Բերրի: 5.Պատուհան: 7.Մարտիկ: 9.Անիրավ: 12.Անոթ: 15.Ալբալի: 19.Վոլգա: 23.Տալոն: 24.Պարմա: 25.Աննա: 27.Մոգ: 29.Ակահ: 30.Ինձ: 32.Կրիա: 33.Պորտ: 37.Յորք: 39.Քղամիդ: 40.Մութաքա: 41.Հիթ: 42.Սիրուշո: 44.Բիկով: 46.Ղեկ: 47.Կինո: 50.Ալան: 51.Մսուր:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈԵՈ ՄՈՆԱՅԱՐՈՍ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱՔՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աքոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆՈ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445